Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
փետրվարի 25-ի N 263-Ն որոշման

«Հավելված N 14
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՎՈՐ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԾԱԳՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՐԱՎԻ ԿԱՄ ԼԻԶԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են առանց Ճանապարհային ոստիկանության իրավասու ստորաբաժանում ներկայանալու Ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային՝ www.roadpolice.am հարթակում (այսուհետ՝ հարթակ) հասարակ գրավոր գործարքի (այսուհետ՝ գործարք) կատարումը և դրանից ծագող տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի, ինչպես նաև գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում կատարելու հետ կապված հարաբերությունները:

2. Հարթակում գործարքի կատարումը և դրանից ծագող տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը հասանելի է միայն ֆիզիկական անձանց պատկանող՝ Հայաստանի Հանրապետությունում այդ գործողության պահի դրությամբ հաշվառված տրանսպորտային միջոցների համար:

3. Հարթակում գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում կարող են կատարել բանկերը, վարկային և գրավատնային գործունեություն իրականացնող կազմակերպությունները (այսուհետ՝ կազմակերպություն)՝ այդ գործողության պահի դրությամբ սեփականության իրավունքի պետական գրանցում և (կամ) հաշվառում ունեցող տրանսպորտային միջոցների հետ կապված գործարքներով:

2. ՀԱՐԹԱԿՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

4. Ֆիզիկական անձինք գործարք կատարելու և դրանից ծագող տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման համար հարթակ կարող են մուտք գործել նույնականացման քարտի կամ բջջային նույնականացման քարտի միջոցով:

5. Մուտք գործելուց հետո ֆիզիկական անձը (ձեռք բերողը) հնարավորություն կստանա տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը և հաշվառման համարանիշը մուտքագրելու միջոցով որոնել և գնային հարցում ներկայացնել նախընտրած տրանսպորտային միջոցը ձեռք բերելու համար:

6. Գնային հարցումը հաստատելուց հետո օտարողը հարթակից ներբեռնում է պայմանագիրը և այն վավերացնում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Պայմանագրի ձևը հաստատվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:

7. Ստորագրված պայմանագիրը վերբեռնելով հարթակ՝ ուղարկվում է ձեռք բերողին:

8. Ձեռք բերողը հաստատում է հարթակից ներբեռնված պայմանագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացնելու միջոցով:

9. Վավերացված պայմանագիրը համակարգ վերբեռնելու պահից գործարքը համարվում է կատարված, և համակարգն ինքնաշխատ եղանակով պատրաստում է տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման հայտ (այսուհետ՝ հայտ):

10. Հայտի ընդունումը մերժվում է, և գործարքը համարվում է անվավեր, եթե հաշվառված տրանսպորտային միջոցի սեփականատերը գտնվում է հետախուզման մեջ:

11. Ընդունված հայտի հիման վրա հարթակն ինքնաշխատ եղանակով պատրաստում է տրանսպորտային միջոցի պետական գրանցման գործողության նախագիծը, որի հաջող ավարտի մասին անմիջապես հաղորդագրություն է ստացվում ձեռք բերողի էջում (այսուհետ՝ էջ):

12. Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունք համարվում է գրանցված (գրանցումն ավարտված), եթե ձեռք բերողը (կամ նրա ներկայացուցիչը) պետական գրանցման գործողության նախագծի պատրաստ լինելու մասին էջում հաղորդագրությունը ստանալուց հետո «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում ներկայանալով Ճանապարհային

ոստիկանության իրավասու ստորաբաժանում՝ ներկայացնում է այդ պահի դրությամբ պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցի գույքահարկի պարտավորություններն ամբողջական կատարման մասին փաստաթուղթ և հանձնում ձեռք բերված տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշերը և հաշվառման վկայագիրը՝ իր ցանկությամբ ստանալով տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը:

13. Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը ձեռք բերողին (կամ նրա ներկայացուցչին) տրամադրվում է էլեկտրոնային թվային ստորագրության դիմաց:

14. Տրանսպորտային միջոցի պետական գրանցումը մերժվում է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

15. Տրանսպորտային միջոցի պետական գրանցումը մերժելու մասին ձեռք բերողի էջին անմիջապես ուղարկվում է հաղորդագրություն:

16. Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին որոշումը կայացնելուց հետո այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հանձնվում է վարչական ակտի հասցեատիրոջը:

3. ՀԱՐԹԱԿՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՐԱՎԻ ԿԱՄ ԼԻԶԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

17. Հարթակում գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցումը կատարելու համար անհրաժեշտ է ընտրել «Իրավաբանական անձանց մուտք» դաշտը: Դաշտը հասանելի է ինչպես կազմակերպության ղեկավարի, այնպես էլ՝ վերջինիս կողմից Ճանապարհային ոստիկանություն ներկայացված լիազորագրում նշված կազմակերպության աշխատակիցների նույնականացման քարտի միջոցով մուտք գործելու դեպքում:

18. Կազմակերպության ղեկավարը կարող է Ճանապարհային ոստիկանություն ներկայացված դիմումով ներկայացնել կազմակերպության այն աշխատակիցներին, ովքեր լիազորված են հարթակում գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում իրականացնելու լիազորությամբ՝ դիմումում նշելով (կցելով նույնականացման քարտի պատճենը) վերջիններիս նույնականացման քարտի տվյալները:

19. Հարթակում գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում իրականացնելու լիազորություն ունեցող անձի փոփոխության դեպքում կազմակերպության ղեկավարը դիմում է Ճանապարհային ոստիկանություն՝ հարթակում նոր տվյալներով կարգավորումներ կատարելու նպատակով:

20. Ընտրելով «Գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում» կոճակը՝ լրացվում է էլեկտրոնային դիմումը (այսուհետ՝ դիմում), որին կցվում են օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

21. Դիմումը լրացվում է համապատասխան դաշտերում պահանջվող տվյալները մուտքագրելու միջոցով՝ հետևելով կայքի հրահանգներին:

22. Լրացված դիմումը հաստատվում է կազմակերպության ղեկավարի կամ հարթակում գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում իրականացնելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

23. Ներկայացված դիմումի հիման վրա Ճանապարհային ոստիկանության իրավասու ստորաբաժանման աշխատակիցն իրականացնում է տրանսպորտային միջոցի գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում, որի հաջող ավարտի դեպքում կազմակերպության հարթակի էջին կամ դիմումով ներկայացված էլեկտրոնային հասցեին ուղարկվում է «Տրանսպորտային միջոցի գրավի (լիզինգի պայմանագրով վարձակալության) իրավունքի պետական գրանցման» վկայականի էլեկտրոնային տարբերակը:

24. Տրանսպորտային միջոցի գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցումը մերժվում է «Ճանապարհային երթևեկության անվտանգության մասին» օրենքի 13-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

25. Տրանսպորտային միջոցի գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին որոշումը կայացնելու դեպքում այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հանձնվում է վարչական ակտի հասցեատիրոջը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

02.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ